

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորական ուղերձը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ

Սիրելի՛ սյունեցիներ,

Շնորհավորում եմ մեզ բոլորիս Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, մաղթում եմ բարօրություն, առողջություն և երջանկություն, իսկ մեր հայրենիքին՝ խաղաղություն, բարեկեցություն, համամարդկային արժեքների վրա խարսխված առաջընթաց ու զարգացում:

Մենք հաղթահարեցինք մեր պատմության ընթացքի ամենավճռական ու կանխորոշող տարիներից մեկը՝ 2014-ը և թևակոխելով 2015 թվական, վստահ եմ, որ Սյունիքը կշարունակի զարգանալ, հզորանալ ու բարգավաճել: Պատմական անառարկելի փաստ է, որ Սյունիքը եղել է, կա ու կմնա հայոց արևելաց կողմաց անառիկ ամրոցը:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ամանորը ամենաավանդական ու ամենասպասված ընտանեկան տոնն է, որին սպասում ենք սիրով ու ջերմությամբ, երազանքով ու ակնկալիքներով:

Մեր հայրենիքի բոլոր բնակիչներին, ցանկանում եմ, որ Նոր տարին երջանկություն, բարեկեցություն, առողջություն ու սեր բերի մարդկանց ու ընտանիքներին: Թող ետևում մնան բոլոր դժվարություններն ու հոգսերը, անհաջողություններն ու ծախսողումները:

2015 թվականին ուժ գտնենք ձեռնարկելու հայրենանվեր գործեր և հպարտանալու մեր հաջողություններով:

Մաղթում եմ, որ այս օրերում սյունյաց յուրաքանչյուր օջախից ելնող ծուխն ավետի շենություն ու առատություն, իսկ տոնական սեղանների շուրջ իշխի բարձր տրամադրությունն ու լավատեսությունը:

Թող Նոր տարին խաղաղություն, արևշատություն և բարիքների առատություն բերի ձեր ընտանիքներին ու մեր երկրին:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ

ՀՀ Սյունիքի մարզպետ

Ս. Խաչատրյան

24 դեկտեմբերի 2014թ.